ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հռիփսիմե Միհերի Խաչատրյանի «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում» ատենախոսության

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները, հասարակության նախկինում եղած արժեքային համակարգի փլուզումը և դրա արդյունքում ձևավորված սոցիալական անոմիան, հասարակության անդամների մեծամասնության մոտ անվստահությունը ներկայի ու ապագայի հանդեպ իրենց անմիջական ազդեցությունն ունեցան հասարակության անդամների և հատկապես՝ երեխաների վարքագծի ձևավորման վրա: Դրան մեծապես նպաստեցին նաև անչափահասների դաստիարակման գործընթացում սոցիալական ինստիտուտների, ընտանիքի և դպրոցի դաստիարակչական ներգործության թուլացումը, երեխաների ազատ ժամանցի կազմակերպմանը պետության գրեթե անմասն մնալը, անչափահասների և երիտասարդների մոտ առաջացած հոգևոր վակուումը և իրավական նիհիլիզմը: Արդյունքում՝ գրանցվեց երեխաների շեղվող և հանցավոր վարքագծի ակտիվացում՝ ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ՝ խմբերի կազմում:

Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ անչափահասները հանցանք կատարելիս նախընտրում են գործել ոչ թե մենակ, այլ ուրիշ անձանց հետ միասին: Նման վարքագծի ընտրության պատճառները բազմաբնույթ են՝ երեխայի կենսափորձի պակասը, մեծերին նմանակելու ձգտումը, ենթարկվողականությունը, հեշտ ներշնչվողականությունը, անչափահասի մոտ առավել վառ արտահայտված սոցիալական շփման կարիքը, ինքնահաստատման՝ սեփական «եսի» դրսևորման, իր հասակակիցների, տարիքով իրենից մեծերի հարգանքին արժանանալու պահանջմունքը, ինչպես նաև խմբի կազմում գործելիս՝ ապահովության, ինքնավստահության, անպատժելիության զգացումը: Խմբում անձը դառնում է անդեմ, նվազում է նրա անհատական պատասխանատվությունը, դրանով պայմանավորված՝ նաև վախը հնարավոր պատասխանատվության հանդեպ, ինչն էլ նպաստում է նրա կողմից հանցանքի կատարմանը:

ՀՀ-ում երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելիս ևս նկատվում է նշված օրինաչափությունը, հատկապես մարզերում, ընդ որում՝ երեխաները վերջին ժամանակաշրջանում առավելապես ներգրավվում են միայն անչափահասներից կազմված խմբերում, որոնք էլ նրանց համար հանդիսանում են յուրատիպ ռեֆերենտային խմբեր:

Երեխաների շեղվող վարքագծի ուսումնասիրության ժամանակ առանձին հետաքրքրություն են ներկայացնում վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում տարածում գտնող երիտասարդական ոչ ֆորմալ շարժումները, որոնց անդամակցությունը ևս հաճախ ուղեկցվում է դևիանտ վարքագծի դրսևորմամբ:

Ասվածը, բնականաբար, վկայում է Հ. Խաչատրյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, յոթ ենթագլուխներից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Անչափահասների խմբային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը» հեղինակը ներկայացնում է անչափահասների խմբային հանցավորության հասկացությունը, վիճակը, կառուցվածքը և շարժընթացը, քննարկում անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունը, վերլուծում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրը և անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող գործոնները:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա, հեղինակը կատարում է մի շարք առաջարկներ, այն է՝ անչափահասների խմբային հանցավորությունը սահմանել որպես սոցիալական, իրավական, հարաբերականորեն զանգվածային երևույթ, որն իրենից ներկայացնում է կոնկրետ տարածքում և կոնկրետ ժամանակահատվածում անչափահասների հանցավոր խմբերի կողմից կատարվող հանրորեն վտանգավոր

արաքների ամբողջություն, անչափահասների խմբային հանցավորության ոլորտում կրիմինալոգիական վերահսկողության օբյեկտ համարել հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 10-18 տարեկան անձանց:

Միաժամանակ, հեղինակը վերահաստատում է կրիմինալոգիական գրականության մեջ տարածում գտած այն կարծիքները, որ խմբի հասարակական վտանգավորությունն առավել բարձր է, երբ նրա կազմում գործում են նախկինում դատապարտված և հանցավոր փորձ ունեցող մասնակիցներ (այդ թվում՝ անչափահասներ,անպատժելիությունը բերում է անչափահասների կայուն քրեածին խմբերի ձևավորման, խմբային հանցավորության քանակական և որակական փոփոխության, իսկ հանցագործության կատարումն էլ այն միջոցն է, որով անչափահասը հասնում է խմբում ներգրավված և պահանջված լինելու նպատակին:

Վերլուծության ենթարկելով անչափահասների խմբային հանցավորության վիճակը և տիպերը՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ ՀՀ-ում նկատվում է անչափահասների խմբային հանցավորության նվազում, թեև այն առավել տարածված է Երևան քաղաքում, Կոտայքի և Լոռվա մարզերում, ինչպես նաև գրանցվում է անչափահասների հանցավոր խմբերի մեծ շարժունակություն, այսպես կոչված, «շրջագայող (գաստրոլյոր) խմբերը», որոնք հանցանքը կատարում են բնակության վայրից բավական հեռավորության վրա: Միաժամանակ՝ հեղինակը նշում է, որ ըստ տարիքի և կազմի ՀՀ-ում առավել տարածված են անչափահասների հանցավոր փոքր և խառը խմբերը:

Հեղինակի կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործոններին, որոնք հանգեցնում են անչափահասների խմբային հանցավորության ձևավորմանն ու զարգացմանը: Քննարկելով ընտանիքի, կրթական հաստատությունների, պետական մարմինների գործունեությունն այս ոլորտում՝ հեղինակը բարձրացնում է մի շարք արժեքավոր հարցեր, մասնավորապես՝ նշում, որ երեխայի հետ աշխատելիս պետք է ներգրավվի ոչ թե ցանկացած, այլ երեխայի հետ աշխատելու հմտություններ ունեցող հոգեբան, Ոստիկանության անչափահասների հետ աշխատանքի գործառույթներ ունեցող տեսուչները չպետք է ծանրաբեռնվեն այլ գործառույթներով, պրոբացիոն ծառայությունում պետք տեղի ունենա մասնագիտացում՝ անչափահասների գործերով և այլն: Իհարկե, ցանկալի կլիներ, որ հենց այս եզրակացություններն էլ հիմք

հանդիսանային պաշտպանության ներկայացվող առանձին դրույթների ձևակերպման համար:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման վերլուծությանը, մասնավորապես՝ երեխաների խմբային հանցավորության ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ հատուկ կանխարգելմանն ուղղված գործունեության ուսումնասիրությանը:

Հեղինակը մանրամասն անդրադարձել է այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման առումով կրթական հաստատությունների դերակատարության բարձրացմանը, դպրոց-ընտանիքի համագործակցության սերտացմանը, երեխաների ազատ ժամանցի պետական մակարդակով կազմակերպմանը, պետական մարմինների դերակատարությանը՝ երեխաների շեղվող վարքագծի կանխարգելման առումով: Հեղինակը հանդես է եկել մի շարք առաջարկություններով՝ կանխարգելման արդյունավետության տեսանկյունից առաջարկել է սահմանազատել անչափահասների և ընտանեկան բռնությունների կանխարգելման գործերով տեսուչների գործառույթները, քրեակատարողական հիմնարկում ապահովել աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության պատշաճ որակ, խմբային պրոֆիլակտիկայի մարտավարության մշակում և կիրառում, իսկ անչափահասների խմբի անդամների միմյանցից մեկուսի՝ ազատազրկման ձևով պատժի կրման հնարավորություն: Միաժամանակ՝ հեղինակը նշում է, որ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ դաստիարակչական կենտրոն, որտեղ յուրաքանչյուր անչափահասի նկատմամբ կցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ հոգեբանամանկավարժական միջոցների ներգործությամբ:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Աշխատանքի էջ 16-ում հեղինակը նշում է, որ «...կրիմինալոգիական տեսանկյունից անչափահասների, այդ թվում՝ նրանց խմբային հանցավորության հասկացության տակ պետք է հասկանալ քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր այն արարքների ամբողջությունը, որոնք կատարվում են 10-18 տարեկան անձանց կողմից»: Թերևս, եզրութաբանական առումով, ներկայացվածը վիճահարույց է, քանի

որ 10-14 տարեկանների պարագայում հանցավորության մասին խոսել չենք կարող, իսկ հանցագործության սուբյեկտ չհանդիսացող երեխաների՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարմանն ուղղված վարքագծի առումով ավելի ճիշտ էր օգտագործել շեղվող/դևիանտ կամ դելինկվենտ վարքագիծ եզրույթները:

2. Աշխատանքի էջ 58-ում հեղինակը նշում է. «Մեր կողմից իրականացրած հետազոտության ընթացքում անչափահասների հանցավոր խմբերը կազմակերպված հանցավոր խմբերի տիպին դասելու համար որպես չափանիշ, առանձնացրել ենք երեք և ավել անձանց համատեղ հանցավոր գործունեությունը, որի դեպքում հստակ երևում են խմբի կառուցվածքը, խմբի զինվածությունը, հանցավոր գործունեության հարաբերականորեն երկար ժամանակահատվածը, կատարած հանցագործությունների ծանրության աստիճանը»: Կազմակերպված հանցավոր խմբին դասվելու համար՝ զինվածությունը պարտադիր հատկանիշ, ըստ էության, չի հանդիսանում: Ցանկալի կլիներ, որ հեղինակը հստակեցներ իր մոտեցումը և հիմնավորեր, թե ինչով է պայմանավորված իր այս դիրքորոշումը:

3. Կարծում եմ, աշխատանքի արժեքավորությունը կբարձրանար, եթե անչափահասների խմբային հանցավորությունն ուսումնասիրելիս, հեղինակն ուշադրություն դարձներ նաև երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա ՀՀ-ում գործող երիտասարդական ոչ-ֆորմալ խմբավորումների, շարժումների գործունեության ազդեցությանը, օրինակ՝ էմոներինը, ինչը թույլ կտար համալիր ուսումնասիրության ենթարկել անչափահասների խմբային հանցավորության պատճառ հանդիսանող գործոնները:

4. Վիճահարույց են պաշտպանության ներկայացվող դրույթ 3-ը, որով հեղինակը նշում է, որ «Միջանձնային շփման գերիշխող դերը կանխորոշում է համատեղ հանցավոր գործունեությունը, իսկ հանցանքի կատարումն այն միջոցն է, որով անչափահասը հասնում է խմբում ներգրավված և պահանջված լինելու նպատակին՝ ձեռք բերելով հանցավոր փորձ և անհատական հանցավոր «կարիերա» սկսելու ինքնավստահություն», ինչպես նաև դրույթ 2-ը՝ «Խմբի հասարակական վտանգավորությունն առավել բարձր է, երբ նրա կազմում գործում են նախկինում դատապարտված և հանցավոր փորձ ունեցող մասնակիցներ (այդ թվում՝ անչափահասներ), քանի որ նրանց հետ շփումը բարձրացնում է անչափահասի հեղինակությունն իր հասակակիցների շրջանում՝ ապահովելով նրանց որոշակի

«հոգեբանական կոմֆորտ», հանցավոր ենթամշակույթը տարածվում է անչափահասների շրջանում, ինչպես նաև անչափահասներին փոխանցում են իրենց հանցավոր փորձը՝ նրանց մոտ ձևավորելով և զարգացնելով հանցավոր հմտություններ»: Կարծում եմ, գրականության մեջ արտահայտված այս կարծիքը հեղինակի կողմից կարող էր առանձնացվել որպես պաշտպանության ներկայացվող դրույթ, եթե հեղինակի ինքնուրույն էմպիրիկ ուսումնասիրության արդյունքում վեր հանվեր այնպիսի օրինաչափություն, որը մինչ այդ որևէ հեղինակի կողմից չէր արտահայտվել, ինչը, սակայն, ներկայացված ուսումնասիրության շրջանակներում առկա չէ:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները, իմ կարծիքով չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Հռիփսիմե Մհերի Խաչատրյանի «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.դ. Ա.Մարգարյան

Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Դեկանի տեղակալ Հ. Խաչիկյան